# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱԽՈՍԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
## N ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/042

ք. Երևան «10» Դեկտեմբեր 2020թ.

«ՀՀ պետական եկամուտների կոմիտեն», ի դեմս գլխավոր քարտուղար Էդգար Գևորգյանի, որը գործում է «ՀՀ պետական եկամուտների կոմիտեն»-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Յուքոմ» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Արա Խաչատրյանի, որը գործում է «Յուքոմ» ՓԲԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

### 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է հանրային հեռախոսային ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

### 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 2.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 2): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում է 22,800,000 (քսաներկու միլիոն ութ հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.1.1. Պայմանագրի գնի մինչև 9 (ինը) տոկոսի չափով՝ 2,052,000 (երկու միլիոն հիսուներկու հազար) ՀՀ դրամը, Պատվիրատուն փոխանցում է Կատարողի բանկային հաշվին դեկտեմբեր ամսվա համար՝ որպես կանխավճար: Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ)

կատարելու ձևով: Ընդ որում մինչև կանխավճարի ամբողջական մարումը, Կատարողին վճարումներ չեն կատարվում:

4.2. Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի 7.13 կետով կնքվելիք վճարման ժամանակացույցով նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրը ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

**Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:**

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի

Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 20 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2 և N 2.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ պետական եկամուտների կոմիտե | «Յուքոմ» ՓԲԸ |
| ք.Երևան, Մ. Խորենացի 3,7 | ՀՀ ք.Երևան, Ս. Գրիգոր Լուսավորիչ 9 |
| ՀՎՀՀ 02647057 | «Ամերիաբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900011054013 | Հ/Հ 1570043102134100 |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի | ՀՎՀՀ 00024873 |
| գործառնական վարչություն | Գլխավոր տնօրեն |
| Գլխավոր քարտուղար | |
| **Է. Գևորգյան** ____________ | **Ա. Խաչատրյան** ____________ |
| /ստորագրությունը/ Կ.Տ/ | /ստորագրությունը/ Կ.Տ/ |

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:*

*Հավելված N 1*
*« 10 » Դեկտեմբեր 2020թ. կնքված*
*ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/042 ծածկագրով պայմանագրի*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | մատուցման | |
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | Առավելագույն գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | հասցեն | ժամկետը |
| 1 | 64211100/503 | Ներկայացված է ստորև | դրամ | 22,800,000 | 1 | Ներկայացված է ստորև | Ծառայությա մատուցումը իրականացվում է այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա՝ համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված առավելագույնը 365 օրացուցային օրվա ընթացքում |

## ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱԽՈՍԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ
## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

1. Կատարողը պետք է ապահովի բաժանորդի Հավելված 1-ում նշված տարածքներում արդեն իսկ գործող թվով 523 հատ SIP, 2 հատ E1 (նախատեսված 500 հատ հեռախոսահամարների համար) ֆիքսված հեռախոսակապի ծառայությունները:
2. Կատարողը գնային առաջարկը ներկայացնում է առավելագույնը 600 SIP հեռախոսահամարների, 2 հատ E1 կապուղու (նախատեսված 500 հատ հեռախոսահամարների համար), 9-րդ և 10-րդ կետերում նշված պահանջների և առավելագույնը 12 000 000 (տասներկու միլիոն) ՀՀ դրամ արժեքով հավելյալ ծառայությունների հանրագումարով՝ առավելագույնը 365 օրացուցային օրվա համար:
3. Կատարողը ք.Երևան, Մ.Խորենացու-3. 7 և 7ա հասցեների թվով 500 հատ հեռախոսահամարները պետք է տրամադրի 2 հատ E1 կապուղով:

4. Կատարողի կողմից տրամադրվող հեռախոսահամարները պետք է աշխատեն SIP 2.0 (RFC 3261) ստանդարտով:
5. Կատարողի կողմից տրամադրվող յուրաքանչյուր հեռախոսահամար (SIP TRUNK) պետք է պատվիրատուի ցանցում նույնականացվի մուտքանուն/գաղտնաբառով՝ (digest authentication) Հավելված 1- ում նշված հասցեներում գործող պատվիրատուի հեռախոսակապի սերվերներում, ըստ պատվիրատուի պահանջի:
6. Կատարողի կողմից տրամադրվող հեռախոսահամարները պետք է ապահովեն IP հեռախոսակապի հիմնական հատկությունները (Call Transfer, Caller ID, Conference Call, Video call)
7. Կատարողի կողմից տրամադրվող հեռախոսահամարները պետք է հնարավորություն ունենան աշխատել բազմագծային ռեժիմում:
8. Կատարողը պետք է ապահովի Խորենացի 3 հասցեում 1 հատ SIP հեռախոսահամար, որն ունենա անվճար զանգ ծառայություն, որը հնարավորություն կտա անվճար զանգեր ընդունել ՀՀ ֆիքսված և շարժական հեռախոսակապի ցանցերից: Հեռախոսահամարի ամսավճարի, մուտքային զանգերի րոպեավճարի և հավելյալ ծառայությունների համար վճարելու է պատվիրատուն:Պատվիրատուի պահանջով անվճար զանգ ծառայություն կարող է ակտիվանալ Հավելված 1-ում նշված հասցեներում:
9. Կապի ենթակառուցվածքների բացակայությամբ պայմանավորված կատարողը պատվիրատույի պահանջով պետք է տրամադրի առավելագույնը թվով 20 հատ հեռախոսահամարներ որոնք պետք է ունենան հնարավորություն միավորելու նմանատիպ հեռախոսագծերը համապատասխանաբար ֆիքսված և/կամ շարժական կապի գլխավոր համարների ներքո, պատվիրատույի ընտրած գլխավոր համարին կցված ձայնային մենյուի (IVR) կամ քարտուղարի միջոցով մուտքային զանգերը համապատասխան աշխատակցին կարճ համարով ուղղորդելու հնարավորություն, նմանատիպ հեռախոսագծերի միջև կարճ համարներով զանգեր կատարելու հնարավորություն, հեռախոսագծերը և ծառայությունները ավելացնելու և պակասացնելու ճկունություն, հատուկ վեբ-ինտերֆեյսի միջոցով հեռախոսագծերի հեշտ և օպերատիվ կառավարման և վերահսկման հնարավորություն (ծառայությունների ակտիվացում, զանգերի ձայնագրություն և զանգերի վերծանման առցանց հնարավորություն ցանկացած պահի):
10. Կատարողը պետք է տրամադրի Հավելված 1-ում նշված տարածքներում հեռախոսակապի համար առանձնացված VLAN
11. Կատարողը պետք է ապահովի «Leyer2» մակարդակի համակցում և ցանկացած «Leyer2» պրոտոկոլների թափանցելիություն Հավելված 1 –ում նշված հասցեների միջև:
12. Կատարողը պետք է ապահովի տրամադրվող ծառայության անխափան աշխատանքը Հավելված 1-ի կետերի միջև (routing with multiple redundancy paths and resiliency):
13. Կատարողը պետք է ապահովի ծառայության մատուցման համար անհրաժեշտ սարքավորումների տրամադրումը, տեղադրումը, կարգաբերումը և սպասարկումը:
14. Կատարողը պետք է տրամադրի շուրջօրյա ռեժիմով աշխատող տեխնիկական և ծրագրային առանձնացված օպերատորով սպասարկում և տեխնիկական աջակցում:
15. Հավելված 1-ում նշված հասցեների հեռախոսահամարների քանակը կարող են ակտիվանալ և ապաակտիվանալ պատվիրատուի գրավոր պահանջի հիման վրա:
16. Ծառայության մատուցման հաջորդ ամսում պարտադիր, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում՝ ըստ պատվիրատուի պահանջի կատարողը պետք է տրամադրի հաշվի մանրամասն վերծանումը: Վերծանումը պետք է տրամադրվի միայն կազմակերպության լիազորված անձին:
17. Ֆիքսված հեռախոսակապի ծառայության ամսավճարը սկսում է հաշվարկվել ծառայությունների ակտիվացմանը հաջորդող օրվանից:
18. Ֆիքսված հեռախոսակապի ծառայության ամսավճարը հաշվարկվում է ըստ օրերի:
19. Հեռախոսահամարները, անկախ դասակարգումից, տրամադրվում են անվճար:
20. Կատարողը պետք է ապահովի հեռախոսային խոսակցությունների գաղտնիությունը:

21. Կատարողը պարտավորվում է չբացահայտել ծառայությունների մատուցման ժամանակ նրան հասանելի դարձած տեղեկատվությունը: Տեղեկատվության չբացահայտման վերաբերյալ ՀՀ ՊԵԿ-ի կողմից կատարողի հետ կնքվելու է երկկողմանի համաձայնագիր:
22. Մեկ ամսվա ընթացքում Հավելված 1-ի որևէ կետում կապի խափանումների(բացակայությունների) ժամանակահատվածը չպետք է գերազանցի 120 րոպեն: Սույն դրույթի իմաստով կապի խափանման (բացակայության) ժամանակը հաշվարկվում է որպես մեկ ամսվա ընթացքում տվյալ կետում կապի բոլոր խափանումների (բացակայությունների) ժամանակահատվածների հանրագումար:
23. Ծառայությունները տրամադրվում է աշխարհագրական հեռախոսահամարներով Երևանում քաղաքային կոդով , իսկ ՀՀ մարզերում ռեգիոնալ կոդերով:

Հավելված 1
Բաժանորդի
տարածքների ցանկ

| h/h | Հասցե | Մատուցվող ծառայության նկարագիր |
|---|---|---|
| 1 | ք. Երևան, Մ.Խորենացու փ.թիվ 3, 7, 7ա | 2 հատ E1 ծառայություն նախատեսված 500 հեռախոսահամարների համար, 1 Sip հեռախոսահամար (անվճար զանգ ծառայությամբ) |
| 2 | ք.Երևան, Ահարոնյան 12/3 | 41 հատ Sip հեռախոսահամար |
| 3 | ք.Երևան, Կոմիտաս 35 | 61 հատ Sip հեռախոսահամար |
| 4 | ք.Երևան,Դեղատան 3 | 69 հատ Sip հեռախոսահամար |
| 5 | ք.Երևան, Անդրանիկի 37/1 | 32 հատ Sip հեռախոսահամար |
| 6 | ք.Երևան, Հյուսիսային փ. 6 | 6 հատ Sip հեռախոսահամար |
| 7 | ք.Երևան, Սասունցի Դավթի 87, 87ա | 15 հատ Sip հեռախոսահամար |
| 8 | ք.Երևան, Շինարարների 3/1 | 25 հատ Sip հեռախոսահամար |
| 9 | ք.Երևան, Արարատյան 90 | 2 հատ Sip հեռախոսահամար |
| 10 | ք. Երևան, Սևանի 104/2 | 1 հատ Sip հեռախոսահամար |
| 11 | ք.Երևան, Մոլդովական 41/3 | 9 հատ Sip հեռախոսահամար |
| 12 | ք.Երևան, Մանթաշյան փ. 55 | 9 հատ Sip հեռախոսահամար |
| 13 | ք.Երևան, Ծովակալ Իսակովի 10, 10/16 | 74 հատ Sip հեռախոսահամար |
| 14 | «Զվարթնոց» օդանավակայան Երևան – 42 | 11 հատ Sip հեռախոսահամար |
| 15 | Երևան 42, Զվարթնոց օդանավակայան | 2 հատ հեռախոսահամար |
| 16 | ք.Երևան, Տիգրան Մեծ 1-ին նրբ. | 1 հատ Sip հեռախոսահամար |
| 17 | ք.Գյումրի, Թբիլիսյան խճուղի 2/14 | 15 հատ Sip հեռախոսահամար |
| 18 | Շիրակի մարզ, գյուղ Բավրա Գյումրի-Նինոծմինդա մայրուղի | 6 հատ Sip հեռախոսահամար |

| | | |
|---|---|---|
| | 63/4 | |
| 19 | Շիրակի մարզ, «Շիրակ» օդանավակայան | 1 հատ հեռախոսահամար |
| 20 | ք.Վանաձոր, Մոսկովյան 44 | 6 հատ Sip հեռախոսահամար |
| 21 | գ.Այրում Երկաթուղային 20 | 4 հատ Sip հեռախոսահամար |
| 22 | Տավուշի մարզ, գ. Բագրատաշեն 19 փող. թիվ 69 | 9 հատ Sip հեռախոսահամար |
| 23 | Լոռու մարզ, գյուղ Գոգավան | 10 հատ Sip հեռախոսահամար |
| 24 | Սյունիքի մարզ, գ. Շաքե, Սիսիան-Երևան մայրուղու 7-րդ կմ | 7 հատ Sip հեռախոսահամար |
| 25 | ՀՀ Սյունիքի մարզ, գ.Կարճևան Մայրուղի-4 | 11 հատ Sip հեռախոսահամար |
| 26 | ք.Աշտարակ, Պռոշյան 29 | 7 հատ Sip հեռախոսահամար |
| 27 | ք.Արտաշատ, Օգոստոսի 23/83 | 6 հատ Sip հեռախոսահամար |
| 28 | ք.Գավառ, Հերոս քազաք Նովորոսիյսկի 4 | 5 հատ Sip հեռախոսահամար |
| 29 | ք.Գորիս, Տաթևանցու-9 | 7 հատ Sip հեռախոսահամար |
| 30 | ք.Եղեգնաձոր, Նարեկացի 8/3 | 7 հատ Sip հեռախոսահամար |
| 31 | Ք.էջմիածին Մաշտոցի 81 | 6 հատ Sip հեռախոսահամար |
| 32 | ք.Իջևան, Անկախության 12 | 7 հատ Sip հեռախոսահամար |
| 33 | ք.Նոյեմբերյան, Երևանյան 4 | 1 հատ Sip հեռախոսահամար |
| 34 | ք.Կապան, Ռ. Մինասյան փողոց 20 ա | 8 հատ Sip հեռախոսահամար |
| 35 | ք.Մեղրի,Անդրանիկի-2/11, 2/12 | 1 հատ Sip հեռախոսահամար |
| 36 | ք.Աբովյան, Բարեկամության հրապարակ-1 | 7 հատ Sip հեռախոսահամար |
| 37 | ք.Հրազդան, Սպանդարյան փ 24/1-24/2 | 6 հատ Sip հեռախոսահամար |
| 38 | ք.Սևան, Սայաթ-Նովա 1/1 | 7 հատ Sip հեռախոսահամար |
| 39 | ք.Սիսիան, Սիսակյան 41գ | 1 հատ Sip հեռախոսահամար |
| 40 | ք.Վանաձոր, Վարդանանց 11 | 8 հատ Sip հեռախոսահամար |
| 41 | ք.Ալավերդի, Թումանյան 1ա | 1 հատ Sip հեռախոսահամար |
| 42 | ք.Տաշիր, Կալինինի թաղ.6 | 1 հատ Sip հեռախոսահամար |
| 43 | ք.Գյումրի, Հովսեփյան-1ա | 12 հատ Sip հեռախոսահամար |

*** Ընթացակարգն իրականացվում է համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15 հոդվածի 6-րդ մասի:**

**** Կատարման ժամկետը սահմանվում է համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված ոչ շուտ քան 20 օրացույցային օր հետո, եթե Կատարողի կողմից համաձայնություն չի տրվում ավելի կարճ ժամկետի:**

****** Վճարումն իրականացվում է փաստացի մատուցված ծառայության դիմաց:**

## ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱԿԱԳՆԱՅԻՆ ՑԱՆԿ

Միջազգային զանգեր

| Ուղղություններ | Կոդ | Սակագին (ֆիքս) դրամ/րոպե | Սակագին (բջջ.) դրամ/րոպե |
|---|---|---|---|
| Ադրբեջան | 994 | 150 | 150 |
| Ալբանիա | 355 | 160 | 160 |
| Ալժիր | 213 | 350 | 350 |
| Ալյասկա | 1907 | 100 | 100 |
| Ամերիկյան Սամոա | 1684 | 350 | 350 |
| ԱՄՆ | 1 | 13 | 13 |
| Անգիլիա | 1264 | 340 | 340 |
| Անգոլա | 244 | 350 | 350 |
| Անդորրա | 376 | 90 | 90 |
| Անտիգուա և Բարբուդա | 1268 | 340 | 340 |
| Ասենսիոն | 247 | 800 | 800 |
| Ավստրալիա | 61 | 350 | 350 |
| Ավստրիա | 43 | 350 | 350 |
| Արաբական Միացյալ Էմիրություններ | 971 | 79 | 79 |
| Արգենտինա | 54 | 350 | 350 |
| Արևելյան Թիմոր | 670 | 350 | 350 |
| Արևմտյան Սամոա | 685 | 350 | 350 |
| Արուբա | 297 | 350 | 350 |
| Աֆղանստան | 93 | 99 | 99 |
| Բահամներ | 1242 | 350 | 350 |
| Բահրեյն | 973 | 80 | 80 |
| Բանգլադեշ | 880 | 350 | 350 |
| Բարբադոս | 1246 | 350 | 350 |
| Բելառուս | 375 | 110 | 110 |
| Բելգիա | 32 | 250 | 250 |
| Բելիզ | 501 | 350 | 350 |
| Բենին | 229 | 350 | 350 |
| Բերմուդյան կղզիներ | 1441 | 350 | 350 |
| Բոթսվանա | 267 | 350 | 350 |
| Բոլիվիա | 591 | 350 | 350 |
| Բոսնիա և Հերցեգովինա | 387 | 160 | 160 |
| Բութան | 975 | 350 | 350 |
| Բուլղարիա | 359 | 165 | 165 |
| Բուրկինա Ֆասո | 226 | 350 | 350 |
| Բուրունդի | 257 | 350 | 350 |
| Բրազիլիա | 55 | 350 | 350 |
| Բրունեյ | 673 | 80 | 80 |

| | | | |
|---|---|---|---|
| Գաբոն | 241 | 350 | 350 |
| Գամբիա | 220 | 350 | 350 |
| Գայանա | 592 | 350 | 350 |
| Գանա | 233 | 350 | 350 |
| Գերմանիա | 49 | 120 | 120 |
| Գուամ | 1671 | 350 | 350 |
| Գուանտանամո | 5399 | 350 | 350 |
| Գվադելուպա | 590 | 350 | 350 |
| Գվատեմալա | 502 | 350 | 350 |
| Գվինեա | 224 | 350 | 350 |
| Գվինեա Բիսաու | 245 | 350 | 350 |
| Գրենադա | 1473 | 350 | 350 |
| Գրենլանդիա | 299 | 350 | 350 |
| Դանիա | 45 | 89 | 89 |
| Դիեգո Գարսիա | 246 | 600 | 600 |
| Դոմինիկա | 1767 | 350 | 350 |
| Եգիպտոս | 20 | 79 | 79 |
| Եթովպիա | 251 | 350 | 350 |
| Եմեն | 967 | 130 | 130 |
| Զամբիա | 260 | 350 | 350 |
| Զիմբաբվե | 263 | 350 | 350 |
| Էլ Սալվադոր | 503 | 350 | 350 |
| Էկվադոր | 593 | 350 | 350 |
| Էստոնիա | 372 | 160 | 160 |
| Էրիթրեա | 291 | 350 | 350 |
| Թաիլանդ | 66 | 90 | 90 |
| Թայվան | 886 | 89 | 89 |
| Թյորքս և Կայկոս կղզիներ | 1649 | 350 | 350 |
| Թունիս | 216 | 350 | 350 |
| Թուրքիա | 90 | 79 | 79 |
| Թուրքմենստան | 993 | 95 | 95 |
| Ինդոնեզիա | 62 | 89 | 89 |
| Իռլանդիա | 353 | 130 | 130 |
| Իսլանդիա | 354 | 89 | 89 |
| Իսպանիա | 34 | 79 | 79 |
| Իսրայել | 972 | 85 | 85 |
| Իտալիա | 39 | 160 | 160 |
| Իրան | 98 | 79 | 79 |
| Իրաք | 964 | 80 | 80 |
| Լաոս | 856 | 350 | 350 |
| Լատվիա | 371 | 300 | 300 |

| | | | |
|---|---|---|---|
| Լեհաստան | 48 | 79 | 79 |
| Լեսոթո | 266 | 350 | 350 |
| Լիբանան | 961 | 79 | 79 |
| Լիբերիա | 231 | 350 | 350 |
| Լիբիա | 218 | 350 | 350 |
| Լիխտենշտեյն | 423 | 300 | 300 |
| Լիտվա | 370 | 350 | 350 |
| Լյուքսեմբուրգ | 352 | 89 | 89 |
| Խորվաթիա | 385 | 180 | 180 |
| Կամբոջա | 855 | 350 | 350 |
| Կամերուն | 237 | 350 | 350 |
| Կայմանյան կղզիներ | 1345 | 350 | 350 |
| Կանադա | 1 | 13 | 13 |
| Կաբո Վերդե | 238 | 350 | 350 |
| Կենտրոնական Աֆրիկյան Հանրապետություն | 236 | 350 | 350 |
| Կիպրոս | 357 | 79 | 79 |
| Կիրիբատի | 686 | 350 | 350 |
| Կոլումբիա | 57 | 350 | 350 |
| Կոմորյան կղզիներ | 269 | 350 | 350 |
| Կոնգո | 242 | 350 | 350 |
| Կոնգոյի Դեմոկրատական | 243 | 350 | 350 |
| Կոստա Ռիկա | 506 | 350 | 350 |
| Կոտ դ'Իվուար | 225 | 350 | 350 |
| Կուբա | 53 | 600 | 600 |
| Կուկի կղզիներ | 682 | 350 | 350 |
| Հաիթի | 509 | 350 | 350 |
| Հասարակածային Գվինեա | 240 | 350 | 350 |
| Հավայան կղզիներ | 1808 | 200 | 200 |
| Հարավային Կորեա | 82 | 79 | 79 |
| Հարավային Սուդան | 211 | 350 | 350 |
| Հարավաֆրիկյան | 27 | 350 | 350 |
| Հյուսիսային Կորեա | 850 | 350 | 350 |
| Հնդկաստան | 91 | 69 | 69 |
| Հոնգկոնգ | 852 | 70 | 70 |
| Հոնդուրաս | 504 | 350 | 350 |
| Հորդանան | 962 | 79 | 79 |
| Հունաստան | 30 | 79 | 79 |
| Հունգարիա | 36 | 89 | 89 |
| Ղազախստան | 77 | 95 | 95 |
| Ղրղզստան | 996 | 95 | 95 |

| | | | |
|---|---|---|---|
| Ճապոնիա | 81 | 89 | 89 |
| Մադագասկար | 261 | 350 | 350 |
| Մալայզիա | 60 | 89 | 89 |
| Մալավի | 265 | 350 | 350 |
| Մալդիվներ | 960 | 350 | 350 |
| Մալթա | 356 | 89 | 89 |
| Մալի | 223 | 350 | 350 |
| Մակաո | 853 | 89 | 89 |
| Մակեդոնիա | 389 | 150 | 150 |
| Մայոտ | 262269 | 350 | 350 |
| Մավրիտանիա | 222 | 350 | 350 |
| Մավրիտիուս | 230 | 350 | 350 |
| Մարիանյան կղզիներ | 1670 | 350 | 350 |
| Մարշալի կղզիներ | 692 | 350 | 350 |
| Մարոկկո | 212 | 350 | 350 |
| Մարտինիկա | 596 | 350 | 350 |
| Մեծ Բրիտանիա | 44 | 95 | 95 |
| Մեքսիկա | 52 | 350 | 350 |
| Միկրոնեզիա | 691 | 350 | 350 |
| Մյանմար | 95 | 350 | 350 |
| Մոզամբիկ | 258 | 350 | 350 |
| Մոլդովա | 373 | 180 | 180 |
| Մոնակո | 377 | 150 | 150 |
| Մոնղոլիա | 976 | 350 | 350 |
| Մոնտենեգրո | 382 | 250 | 250 |
| Մոնտսերատ | 1664 | 350 | 350 |
| Նամիբիա | 264 | 350 | 350 |
| Նաուրու | 674 | 600 | 600 |
| Նեպալ | 977 | 350 | 350 |
| Նիգեր | 227 | 350 | 350 |
| Նիգերիա | 234 | 350 | 350 |
| Նիդերլանդներ | 31 | 160 | 160 |
| Նիկարագուա | 505 | 350 | 350 |
| Նիուե | 683 | 600 | 600 |
| Նոր Զելանդիա | 64 | 350 | 350 |
| Նոր Կալեդոնիա | 687 | 350 | 350 |
| Նորվեգիա | 47 | 89 | 89 |
| Նորֆոլկյան կղզիներ | 6723 | 600 | 600 |
| Շվեդիա | 46 | 180 | 180 |
| Շվեյցարիա | 41 | 200 | 200 |
| Շրի Լանկա | 94 | 350 | 350 |

| | | | |
|---|---|---|---|
| Չադ | 235 | 350 | 350 |
| Չեխիա | 420 | 79 | 79 |
| Չիլի | 56 | 350 | 350 |
| Չինաստան | 86 | 49 | 49 |
| Պալաու | 680 | 350 | 350 |
| Պակիստան | 92 | 350 | 350 |
| Պաղեստին | 970 | 89 | 89 |
| Պանամա | 507 | 350 | 350 |
| Պապուա Նոր Գվինեա | 675 | 350 | 350 |
| Պարագվայ | 595 | 350 | 350 |
| Պերու | 51 | 350 | 350 |
| Պորտուգալիա | 351 | 89 | 89 |
| Պուերտո Ռիկո | 1939, 1787 | 350 | 350 |
| Ջամայկա | 1876 | 350 | 350 |
| Ջերսի | 44 | 79 | 79 |
| Ջիբլարթար | 350 | 95 | 95 |
| Ջիբութի | 253 | 350 | 350 |
| Ռեյունիոն | 262 | 350 | 350 |
| Ռուանդա | 250 | 350 | 350 |
| Ռումինիա | 40 | 89 | 89 |
| Ռուսաստան | 7 | 27 | 27 |
| Ռուսաստան Մոսկվա, Սանկտ Բետերբուրգ | 7495/7499, 7812 | 17 | 27 |
| Սան Մարինո | 378 | 400 | 400 |
| Սան Տոմե և Պրինսիպի | 239 | 600 | 600 |
| Սաուդյան Արաբիա | 966 | 89 | 89 |
| Սեյշելյան կղզիներ | 248 | 350 | 350 |
| Սենեգալ | 221 | 350 | 350 |
| Սենթ Լյուսիա | 1758 | 350 | 350 |
| Սենթ Պիեր և Միքելոն | 50841 | 350 | 350 |
| Սենթ Վինսենթ և Գրենադիններ | 1784 | 350 | 350 |
| Սենտ Քիթս և Նևիս | 1869 | 350 | 350 |
| Սերբիա | 381 | 149 | 149 |
| Սիերա Լիոնե | 232 | 350 | 350 |
| Սինգապուր | 65 | 90 | 90 |
| Սիրիա | 963 | 85 | 85 |
| Սլովակիա | 421 | 95 | 95 |
| Սլովենիա | 386 | 200 | 200 |
| Սողոմոնյան կղզիներ | 677 | 600 | 600 |
| Սոմալի | 252 | 350 | 350 |

| | | | |
|---|---|---|---|
| Սուդան | 249 | 89 | 89 |
| Սուրբ Հեղինե կղզի | 290 | 600 | 600 |
| Սուրինամ | 597 | 350 | 350 |
| Սվազիլենդ | 268 | 350 | 350 |
| Վանուատու | 678 | 600 | 600 |
| Վենեսուելա | 58 | 350 | 350 |
| Վիետնամ | 84 | 89 | 89 |
| Վիրջինյան կղզիներ (ԱՄՆ) | 1340 | 350 | 350 |
| Վիրջինյան կղզիներ (Բրիտ) | 1284 | 350 | 350 |
| Վրաստան | 995 | 145 | 145 |
| Տանզանիա | 255 | 350 | 350 |
| Տաջիկիստան | 992 | 95 | 95 |
| Տոգո | 228 | 350 | 350 |
| Տոկելաո | 690 | 700 | 700 |
| Տոնգա | 676 | 350 | 350 |
| Տուվալու | 688 | 350 | 350 |
| Տրինիդադ և Տոբագո | 1868 | 350 | 350 |
| Ուգանդա | 256 | 350 | 350 |
| Ուզբեկիստան | 998 | 95 | 95 |
| Ուկրաինա | 380 | 160 | 160 |
| Ուոլիս և Ֆուտունա | 681 | 350 | 350 |
| Ուրուգվայ | 598 | 350 | 350 |
| Քաթար | 974 | 89 | 89 |
| Քենիա | 254 | 350 | 350 |
| Քուվեյթ | 965 | 80 | 80 |
| Օման | 968 | 350 | 350 |
| Ֆարերյան կղզիներ | 298 | 89 | 89 |
| Ֆիլիպիններ | 63 | 89 | 89 |
| Ֆինլանդիա | 358 | 180 | 180 |
| Ֆիջի | 679 | 350 | 350 |
| Ֆոլքլենդյան (Մալվինյան) կղզիներ | 500 | 450 | 450 |
| Ֆրանսիա | 33 | 100 | 100 |
| Ֆրանսիական Գվինեա | 594 | 350 | 350 |
| Ֆրանսիական Պոլինեզիա | 689 | 350 | 350 |

Հատուկ Ուղղություններ

| **Ուղղություններ** | **Կոդ** | **Սակագին դրամ/րոպե** |
|---|---|---|
| Ավստրալիա VAS | 611451-611453, 611471 | 1500 |

| | | |
|---|---|---|
| Ավստրալիա ծառայություններ | 6113 | 350 |
| Ավստրիա VAS | 43711, 43730, 43740, 43810,043820 | 500 |
| Արբանյակ Թուրայա | 88216 | 3000 |
| Արբանյակ Տելենոր | 88232 | 3000 |
| Բելառուս VAS | 375602 | 1000 |
| Գերմանիա հատուկ ծառայություններ | 49115, 49180 | 500 |
| Գերմանիա VAS | 49700, 49701 | 120 |
| Զիմբաբվե VAS | 263953 | 350 |
| Էմսատ Արբանյակ | 88213 | 3000 |
| Ինմարսաթ | 870 | 3000 |
| Իռլանդիա VAS | 353700, 353800, 353818 | 130 |
| Իսպանիա VAS | 34902 | 1000 |
| Իրիդիում | 8816, 8817 | 3000 |
| Լեհաստան VAS | 482219888-482219889 | 1000 |
| Լիխտենշտեյն ծառայություններ | 4238, 4239 | 300 |
| Կամերուն VAS | 23788005, 23722258 | 1000 |
| Կիպրոս VAS | 357700, 3577777 | 7<br>9 |
| Կոմորյան կղզիներ VAS | 2693905 | 1000 |
| Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետություն | 243123, 2431127, | 1000 |
| (Զաիր) | 24342, 24343 | |
| Կոտ դ'Իվուար VAS | 2252170 | 1000 |
| Հարավաֆրիկյան Հանրապետություն VAS | 27100, 27101, 27105, 27120, 27129, 27130, 27140, 27150, 27160, 27161, 27170, 27180, 27210, 27212, 27213, 27230, 27310, 37211, 27319, 27320, 27330, 27410, 27420, 27430, 27440, 27510, 27570, 2785, | 350 |

| | | |
|---|---|---|
| | 27871-27873, 27875-27879 | |
| Մադագասկար VAS | 261200 | 1000 |
| Մեծ Բրիտանիա VAS | 44870-44873 | 9 5 |
| Մոնակո VAS | 37740-37743, 37746-37749 | 150 |
| Նիգեր VAS | 2272010, 2272039 | 1000 |
| Նորվեգիա ծառայություններ | 4702-4709, 471, 47810, 47815 | 8 9 |
| Շվեյցարիա VAS | 4158 | 200 |
| Ռուսաստան արբանյակ | 7954 | 3000 |
| Սան Մարինո VAS | 3787 | 1000 |
| Օդում | 88298 | 3000 |
| Ֆինլանդիա ծառայություններ և VAS | 35810, 35820, 35829, 35830, 35860, 358700, 35873, 35875, 35876, 35871 | 180 |
| Ֆրանսիա արբանյակ | 3364000-3364004, 3363800 | 300 |

## ՏԱՐԻՖԱՅԻՆ ՍԱԿԱԳՆԵՐ

| | |
|---|---|
| միացման վճար | 0 (անվճար) |
| E1 կապուղի | 0 (անվճար) |
| ամսական բաժանորդավճար | 1500 դր. |

| | |
|---|---|
| Ներառված անվճար րոպեներ դեպի ՀՀ բոլոր ֆիքսված հեռախոսակապի ցանցեր, ինչպես նաև ԱՄՆ և Կանադա | 360 րոպե |
| զանգեր դեպի ՀՀ բոլոր ֆիքսված հեռախոսակապի ցանցեր | 4 դր./րոպե |
| զանգեր դեպի Արցախի ֆիքսված ցանց | 18 դր./րոպե |
| զանգեր դեպի ՀՀ բոլոր շարժական ցանցեր | 24 դր./րոպե |
| զանգեր դեպի Արցախի շարժական ցանց | 28 դր./րոպե |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ք.Երևան, Մ. Խորենացի 3,7
ՀՎՀՀ 02647057
Հ/Հ 900011054013
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն
Գլխավոր քարտուղար

**Է. Գևորգյան** ____________
/ստորագրություն/ Կ.Տ/

**ԿԱՏԱՐՈՂ**
«Յուքոմ» ՓԲԸ
ՀՀ ք.Երևան, Ս. Գրիգոր Լուսավորիչ 9
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570043102134100
ՀՎՀՀ 00024873
Գլխավոր տնօրեն

**Ա. Խաչատրյան** ____________
/ստորագրություն/ Կ.Տ/

Հավելված 2
«10» Դեկտեմբեր 2020թ. կնքված
ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/042 ծածկագրով պայմանագրի

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| ______________________ | ______________________ |
| ______________________ | ______________________ |
| գտնվելու վայրը ____________ | գտնվելու վայրը ______________ |
| հհ ____________________ | հհ____________________ |
| հվհհ ___________________ | հվհհ____________________ |

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
# ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ` Պայմանագիր/ անվանումը` ________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը` «____» «________________» 20 թ.

Պայմանագրի համարը` _________

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը` հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները`

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ծառայությունը հանձնեց | Ծառայությունն ընդունեց |
|---|---|
| ______________________ | ______________________ |
| ստորագրություն | ստորագրություն |

______________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

______________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

Հավելված 2.1
« 10 » Դեկտեմբեր 2020թ. կնքված
ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/042 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____________-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ___________________________-ին կնքված N _______________
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _______-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

______________________
ազգանուն, անուն
______________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

______________________
ազգանուն, անուն
______________________
ստորագրություն